

ցին. զենն ի վեր առեալք, կռուոյ պատրաստէին՝ ի վերայ այնց մանկանց մեռանել: 11 Չի թեպետ եւ սնուցանէին նոքա գորդին զարքային զԱրշակ, սակայն զչարեալք ընդ գործ ժամանակին՝ թողին զսանն իւրեանց զԱրշակ, եւ զնացին ի բաց ի բանակէն արքունի: 12 Եւ չոզան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. եւ անդ նստան ամս բազումս ընտանեալք իւրեանց, եւ թողին զայլ գտուն իւրեանց: 13 Եւ սնուցանէին զայն մանկունսն, զՇաւասպն եւ զՏաճատ. եւ ետուն նոցա զդստերս իւրեանց ի կնութեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան. եւ ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Յայոց մինչեւ ի բազում ամս:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Յաղագս որդոցն Յուսկանն՝ Պապայն եւ Աթանագինէին, եթէ ո՛րպէս կամ զհարդ սատակեցան յանարեւութեան իւրեանց:

2 Այլ որդիքն Յուսկանն, Պապն եւ Աթանագենես, յաստուածատեցութեանն զկեանս իւրեանց վարեցին. յանարեւութեան եւ յամբարշտութեան շրջէին: 3 Եւ զամենայն աւուրս կենաց իւրեանց ի մեծի յանդգնութեան էին, եւ ոչ երկելդ Աստուծոյ առաջի աչաց նոցա. եւ ի բազում անառակութեան եւ ի զհչութեան գնային, եւ զկարգն Աստուծոյ արհամարհեալ այպանէին: 4 Եւ էին նոքա յերկրին Տարաւնոյ յեկեղեցւոջ յաւանին յԱշտիշատ, ուր զառաջինն էր շինեալ զեկեղեցին ի հաւոյն նոցա Գրիգորէ: 5 Յայն գեղ երկոթեան եղբարքն երթեալք հասանէին՝ Պապն եւ Աթանագենես: 6 Եւ բազում հատեալ յարբշտութիւն, զԱստուծոյ զտաճարան այպն առնէին. եւ երթեալք երկոթին եղբարքն մտանէին յեպիսկոպոսանոցն՝ որ էրն անդ, եւ ըմպէին անդ զինի բոզաւք եւ վարձակաւք եւ զուսանաւք եւ կատակաւք, զսուրք եւ զնուիրեալ տեղաւքն քամահեալ՝ կոխան առնէին:

7 Եւ մինչ էին յուրախութեան մեծի, բազմեալք էին ի ներքս եպիսկոպոսանոցին ուտէին եւ ըմպէին, յանկարծակի հրեշտակ Տեառն երեւեցել ի նմանութիւն փայլատական, եւ հարեալ սատակեր զերկոսեան զեղբարսն միանգամայն ի բազմականին անդ: 8 Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին ուրախակիցք եւ բազմականակիցք էին, որք միանգամ անդ դիպեցան, առ հասարակ թողին եւ փախեան, եւ ելին արտաքս ի տաճարտ անտի: 9 Եւ յահէն մեծէ այլ ոչ եւս ոք ի նոցանէ դարձաւ անդրէն. եւ ոչ ոք իշխեաց բնաւ այլ մարդ ի մարդկանէ մտաբերել մտանել ի ներքս, եւ ոչ ի դուրսն հուպ երթալ եւ դնել, քանզի ի բաց մնաց ի փախչելն նոցա. եւ ոչ յայլ աւուրս ոք առ դրաւքն իշխեր անցանել:

10 Եւ Պապն եւ Աթանագենես երկոթեան եղբարքն այսպէս սատակեցան. անկեալ դնէին ի ներքոյ եպիսկոպոսանոցին ի տեղւոջն բազմակաւնացն: 11 Եւ դրունք տաճարին ի բաց կային, եւ ոք հուպ չիշխեր երթալ. մին-